

6994

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ
ՎՏԱՐԵԼԻՍ ԿՈՒՍԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ,

ՀԱՄ Կ(Բ) Կ-ԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ
ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՁԵՎԱԿԱՆ-
ԲՅՈՒՐՈՎՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ
ՄԱՍԻՆ

ՇԵՎ ԱՅԴ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(Բ) ԿԵՆՏԿՈՍԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

3K72

2-22

«ԲՈՂՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԽՈՍՏՈՎ-ԴՈՆ 1938

ՅԿՈՂ

Հ-22

1 DEC 2002 0 JAN 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՆՔ

ԿՐ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ
ՎՏԱՐԵԼԻՍ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ,
ՀԱՄԿ (Բ) Կ-ԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈ-
ՔԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ԶԵՎԱԿԱՆ-ԲՅՈՒՐՈԿՐԱ-
ՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՅԵՎ ԱՅԴ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
(ՀՈՒՆՎԱՐ 1938 թ.)

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, 1938

**ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄ Կ(Բ) Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Հունվար ամսին տեղի ունեցավ Համ Կ(Բ) Կ Կենտրոնական Կոմիտեի հերթական Պլենումը:

Պլենումը ֆենարկեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նրաստեղծանի հարցերը յեվ համապատասխան վորոշումներ ընդունեց:

Պլենումը ֆենեց «կուսակցությունից կոմունիստներին վարելիս կուսկազմակերպությունների կատարած սխալների, Համ Կ(Բ) Կ-ից վարվածների բողոքների նկատմամբ ձեվական-բյուրոկրատական վերաբերմունքի յեվ այդ բերությունները վերացնելու միջոցների մասին» հարցը յեվ համապատասխան վորոշում ընդունեց, վոր հրապարակվում է ստորել:

Բացի դրանից, Կենտկոմի Պլենումը ֆենարկեց մի շարք տեսական հարցեր յեվ ընդունեց համապատասխան վորոշումներ:

Պլենումն ընկ. Պ. Պ. Պոսիտելին ազատեց Համ Կ(Բ) Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամությանի թեկնածուների կազմից:

Պլենումը Համ Կ(Բ) Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամությանի թեկնածուների կազմի մեջ մեցրեց Համ Կ(Բ) Կ Մոսկվայի Մարգկոմի ֆարսուղար ընկ. Ն. Ս. Նուրեյվին յեվ Համ Կ(Բ) Կ Կենտկոմի կազմբյուրոյի կազմի մեջ — ընկ. Լ. Զ. Մելիխին:



1973
38

Համ Կ(Բ) Կ Կենտկոմի Պլենումն անհրաժեշտ է համարում կուսակցական կազմակերպությունների և նրանց ղեկավարների ուշադրությունը դարձնել այն բանին, վոր նրանք, կատարելով խոշոր աշխատանք իրենց շարքերը ֆաշիզմի տրոցկիստական-աջ գործակալներից մաքրելու ուղղությամբ, այդ աշխատանքի ընթացքում թույլ են տալիս լուրջ սխալներ և խեղաթյուրումներ, վորոնք խանգարում են՝ կուսակցությունը յերկերեսանիներից, լրտեսներից, ֆասիստներից մաքրելու գործին: Հակառակ Համ Կ(Բ) Կ Կենտկոմի հաճախակի ցուցումներին և նախազգուշացումներին, կուսակցական կազմակերպությունները շատ դեպքերում միանգամայն վոչ ճիշտ և հանցավոր թեթևամտությամբ են մոտենում կուսակցությունից կոմունիստներին վտարելու գործին:

Համ Կ(Բ) Կ Կենտկոմը մի անգամ չէ, վոր պահանջել է կուսակցական կազմակերպություններից և նրանց ղեկավարներից ուշադրել, անհատական մոտեցում դեպի կուսակցության անդամները՝ կուսակցությունից վտարելու կամ Համ Կ(Բ) Կ-ից սխալ վտարվածներին՝ կուսակցության անդամների իրավունքներում վերականգնման հարցերը վճռելիս:

Համ Կ(Բ) Կ Կենտկոմի Պլենումն իր 1937 թվի մարտի 5-ի վորոշման մեջ ընկեր Ստալինի «Կուսակցական աշխատանքի թեթևամտությունների և տրոցկիստական ու այլ յերկերեսանիների վերացման միջոցների մասին» ղեկուցման առթիվ մատնանշում էր:

«Մեր միջանի կուսակցական ղեկավարները տառապում են պատշաճ ուշադրության բացակայությամբ դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամները, դեպի աշխատողները: Դեռ ավելին, նրանք չեն ուսում-

նասիրում աշխատողներին, չգիտեն՝ ինչով են նրանք ապրում և ինչպես են նրանք աճում, չգիտեն ընդհանրապես իրենց կազրերին: Հենց դրա համար ել նրանց մոտ չկա անհատական մոտեցում դեպի կուսակցության անդամները, դեպի կուսակցության աշխատողները: Իսկ անհատական մոտեցումը մեր կազմակերպական աշխատանքում կազմում է գլխավոր գործը: Յեւլ հենց նրա համար, վոր նրանց մոտ չկա անհատական մոտեցում կուսակցության անդամների և կուսակցական աշխատողների գնահատման գործում, նրանք սովորաբար գործում են առանց կշռադատելու. կամ նրանք ամբողջովին գովաբանում են նրանց հախուռն կերպով, առանց չափի, կամ նրանք նույնպես հախուռն կերպով խփում են առանց չափի, վտարում են կուսակցությունից հազարներով և տասնյակ հազարներով: Մեր կուսակցական միջանի ղեկավարներն ընդհանրապես աշխատում են խորհել տասնյակ հազարներով, հոգ չտանելով «միավորներին» մատին, կուսակցության առանձին անդամների մասին, նրանց վիճակի մասին: Վտարել կուսակցությունից հազարավոր և տասնյակ հազարավոր մարդկանց նրանք համարում են դատարկ բան, մխիթարելով իրենց նրանով, վոր մեր կուսակցությունը մեծ է և տասնյակ հազարավոր վտարվածները չեն կարող վորևե բան փոփոխել կուսակցության դրության մեջ: Բայց այդպես կարող են մոտենալ կուսակցության անդամներին միայն այնպիսի մարդիկ, վորոնք ըստ գործի ելության խորապես հակակուսակցական են:

Դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամներն ու կուսակցական աշխատողներն ունեցած այսպիսի անհոգի վերաբերմունքի հետևանքով կուսակցության մի մասի մեջ արհեստականորեն ստեղծվում է անբավականություն և զայրույթ:

Հասկանալի չէ, վոր տրոցկիստական յերկերեսանիները ճարպկորեն բռնում են այդպիսի չարացած ընկերներին և նրանց իրենց հետեից վարպետորեն

քարշ են տալիս դեպի տրոցկիստական փաստարարության ճահիճը»:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի Պլենումի այդ նույն վորոշման մեջ ասված է.

«Դատապարտել՝ կուսակցության առանձին անդամների բախտի, կուսակցության անդամներին կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու հարցի նկատմամբ ձևական և անհոգի բյուրոկրատական վերաբերմունքի պրակտիկան»:

Պարտավորեցնել կուսակցական կազմակերպություններին ցուցաբերել առավելագույն զգուշություն և ընկերական հոգատարություն՝ կուսակցությունից վտարելու կամ կուսակցության անդամների իրավունքներում վտարվածներին վերականգնելու հարցը վճռելիս»:

«Կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման ժամանակ կուսակցությունից վտարվածների բողոքների ըննարկման գործում յեղած սխալների մասին» 1936 թ. հունիսի 24-ի նամակում Համ Կ(բ)Կ Կենտկոմը մատնանշում էր կուսակցական որդանների վոչ լուրջ, իսկ մի շարք դեպքերում անհոգի-չինովնիկական վերաբերմունքը կուսակցությունից վտարվածների բողոքների քննարկման նկատմամբ:

«Հակառակ Կենտկոմի ցուցումներին,—ասված է այդ նամակում,—վտարվածների բողոքները չափազանց դանդաղ են քննարկվում: Շատ վտարվածներ ամիսներով աշխատում են քննել տալ իրենց տված բողոքները: Մեծ քանակությամբ բողոքներ քննվել են հեռակա կարգով, առանց վորևե կերպ ստուգելու բողոքողների ղիմումները, առանց բողոքողների համար ապահովելու կուսակցությունից նրանց վտարման պատճառների առթիվ մանրամասն բացատրություններ տալու հնարավորությունը»:

Մի շարք ռայոնական կուսակցական կազմակերպություններում կուսակցությունից վտարվածների

նկատմամբ թույլ ե տրվել բոլորովին անհանդուրժելի կամայականություն: Սոցիալական ծագումը թագըր-նելու և պասիվություն համար, և վոչ թե կուսակ-ցություն և խորհրդային իշխանություն դեմ թշնամա-կան գործունեություն համար կուսակցությունից վտարվածներին ավտոմատ կերպով հանում էին աշ-խատանքից, զրկում բնակարաններից և այլն:

Այսպիսով այդ կուսակազմակերպությունների կու-սակցական ղեկավարները, ինչպես հարկն ե չյուրաց-նելով կուսակցության ցուցումները բոլշևիկյան զգաս-տություն մասին, կուսակցական փաստաթղթերի ստուգման ժամանակ վտարվածների բողոքների քնն-նարկման նկատմամբ իրենց ձեռնարկ-բյուրոկրատա-կան վերաբերմունքով ոգնել են կուսակցության թըշ-նամիներին»:

Ինչպես յերևում ե, տեղական կուսակցական կազմա-կերպություններին նախազգուշացնող ցուցումներ յեղել են:

Յեվ այնուամենայնիվ, չնայելով դրան, շատ կուսակազ-մակերպություններ և նրանց ղեկավարները շարունակում են ձեռնարկներ և անհոգի-բյուրոկրատաբար վերաբերվել կուսակցության առանձին անդամների բախտին:

Հայտնի յեն շատ փաստեր, յերբ կուսակցական կազ-մակերպություններն առանց վորեւ ստուգման և, հետե-վաբար, անհիմն կերպով կոմունիստներին վտարում են կուսակցությունից, նրանց զրկում աշխատանքից, հաճախ նույնիսկ առանց վորեւ հիմքի հայտարարում են ժողովրդի թշնամիներ, կուսակցության անդամների նկատմամբ ապո-րինություն և կամայականություն են գործադրում:

Այսպես, որինակ, Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմը 1937 թ. նոյեմբերի 5-ի մեկ նիստում մեխանիկորեն հաստատեց 279 մարդու կուսակցությունից վտարումը: Ստալինգրադի մարզկոմը նոյեմբերի 26-ին հաստատեց 69 մարդու վտա-րումը: Նովոսիբիրսկի մարզկոմը նոյեմբերի 28-ին մեխա-նիկորեն հաստատեց ՀամԿ(բ) ռայկոմների վորոշումները 72 մարդու կուսակցությունից վտարելու մասին: ՀամԿ(բ)Կ

Կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձ-նաժողովի Կուսկոլեգիան Որոշմանիմի յերկրային կու-սակցական կազմակերպությունում 160 բողոքարկած-ներից փոխեց 101 կոմունիստի կուսակցությունից վտա-րելու վերաբերյալ վորոշումները, վորպես սխալ և բողոք-ովին անհիմն վորոշումներ: Նովոսիբիրսկի կուսակցական կազմակերպություններում նույն կերպ հարկավոր յեղավ փոխել 80 վորոշումից 51-ը: Ռոստովի կուսակազմակերպու-թյունում փոխված են 66 վորոշումներից 43-ը: Ստա-լինգրադի կուսակազմակերպությունում—103-ից 58-ը: Ստա-լինսկի կուսակազմակերպությունում—134-ից 80-ը: Կուր-սկի կուսակազմակերպությունում—92-ից 56-ը, Վիսնիցա-յի կուսակազմակերպությունում—337-ից 164-ը և այլն:

Խարկովի մարզի շատ ռայոններում «զգաստություն» պատրվակի տակ կան աշխատանքից ապրրինի կերպով արձակելու և կուսակցությունից վտարվածներին ու ան-կուսակցական աշխատողներին աշխատանք տալուց հրա-ժարվելու բազմաթիվ փաստեր: Զմիսկի ռայոնում 1937 թվի հոկտեմբերին և նոյեմբերին առանց պատճառի աշխա-տանքից հանված են 36 ուսուցիչ և նշված ե հեռացնել ևս 42-ին: Դրա հետևանքով Տարանովկա, Զամոստյաժնոյե, Սկրիպակա և այլ գյուղերի դպրոցներում պատմություն, ԽՍՀՄ Սահմանադրություն, ռուսերեն, ուկրաիներեն և ո-տար լեզուներ չեն դասավանդվում:

Զմիս քաղաքում, միջնակարգ դպրոցում կենսաբանու-թյուն եր դասավանդում ուսուցչուհի Ժուրկոն, 1904 թվին ծնված, կոլխոզնիկի աղջիկ, 8-ամյա մանկավարժա-կան ստաժ ունեցող, մանկավարժական ինստիտուտի չոր-րորդ կուրսի հեռակայող: Տեղական թերթում տպվեց մի թղթակցություն՝ Իզյում քաղաքում վորպես ուսուցիչ աշ-խատող նրա յեղոր մասին, իբրև նացիոնալիստի: Այդ բա-վական յեղավ՝ Ժուրկոյին աշխատանքից արձակելու հա-մար: Ընկ. Ժուրկոյի արձակելու կապակցությամբ քաղա-քական անվտանգություն հայտնվեց նրա ամուսնուն և հարց բարձրացվեց նաև նրան արձակելու մասին: Իսկ ստուգ-ման ժամանակ պարզվեց, վոր Ժուրկոյի յեղոր վերա-

բերյալ թղթակցութիւնը զրպարաութիւնն և և նա աշխատանքից չի հանվել:

Խարկով քաղաքում մի ձերբակալված տրոցկիստուհու—Գորսկայայի գործի վերաբերյալ ՆԳԺԿ որդաններն իբր վկա հարցաքննեցին Տինյակովի անվան Փարբիկի գործարկումի կին աշխատող Նյնգորնին: Իր՝ ՆԳԺԿ կանչվելու մասին նա խոսեց հատուկ բաժնի պետ Սեմենկովի հետ, վորը դրանից հետո անհապաղ գործարանի կուսկոմում հարց դրեց, թե Նյնգորնը կապեր ունի տրոցկիստուհի Գորսկայայի հետ: Հետևանքն այն յեղավ, վոր Նյնգորնը հանվեց գործարկումում աշխատելուց և արձակվեց: Նյնգորնի քրոջ ամուսինը, վորն աշխատում եր տեղական թերթի խմբագրատանը, արձակված է նրա համար, վոր «չի հաղորդել իր կնոջ քրոջ կապերի մասին» տրոցկիստուհների հետ:

Համ Կ(բ)Կ Կուրսկի մարզկոմն առանց վորեւ ստուգման, հեռակա կարգով կուսակցութիւնից վտարել և ձերբակալել է տվել կուսակցութեան անդամ, Դմիտրո-Տարանովսկի շաքարագործարանի գործարկումի նախագահ Իվանչենկովային, նրան վերագրելով այն, վոր իբր թե նա գիտակցաբար և հակահեղափոխականորեն նախապատրաստել է անկուսակցական բանվոր Կուլինիչենկոյի յելույթը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախընտրական ժողովում: Ստուգման ժամանակ պարզվել է, վոր Իվանչենկովայի ամբողջ «մեղքն» այն է յեղել, վոր նախընտրական ժողովում անկուսակցական բանվոր Կուլինիչենկոն, իր կյանքի մասին պատմելուց հետո, շփոթվել է իր յելույթում և մոռացել է ասել Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածույի ազգանունը:

Կույբիշեվի մարզի շատ ռայոններում կուսակցութիւնից վտարվել են մեծ քանակութեամբ կոմունիստներ այն պատճառաբանութեամբ, թե նրանք ժողովրդի թշնամիներ են: Մինչդեռ ՆԳԺԿ որդանները վոչ մի հիմք չեն գտնում կուսակցութիւնից այդ վտարվածներին ձերբակալելու համար: Որինակ՝ Համ Կ(բ)Կ Բոլշե-Չերնիգովյան ռայկոմը կուսակցութիւնից վտարել և ժողովրդի թշնամիներ

է հայտարարել ռայոնական կուսկազմակերպութեան մեջ յեղած 210 կոմունիստների ընդհանուր քանակից 50 մարդու, մինչդեռ ՆԳԺԿ որդանները վոչ մի հիմք չեն գտել այդ վտարվածներից 43 հոգու ձերբակալելու համար: Կույբիշեվի մարզի գծով Համ Կ(բ)Կ կենտկոմին կից կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի Կուսկոլեգիա յեն ներկայանում Համ Կ(բ)Կ ռայկոմների կողմից իբր ժողովրդի թշնամիներ վտարված շատ մարդիկ, պահանջելով կամ ձերբակալել իրենց, կամ թե իրենց վրայից վերացնել խայտառակ դրոշմը:

Համ Կ(բ)Կ կենտկոմն ունի տվյալներ այն մասին, վոր այդպիսի փաստեր տեղի ունեն նաև մյուս կուսկազմակերպութիւններում:

Համ Կ(բ)Կ կենտկոմի պլենումը գտնում է, վոր այդ և նման բոլոր փաստերը կուսկազմակերպութիւններում տարածված են ամենից առաջ նրա համար, վոր կոմունիստների մեջ գոյութիւն ունեն, դեռ չեն հայտաբերվել ու մերկացվել առանձին կոմունիստ-կարյերիստներ, վորոնք աշխատում են կուսակցութեանց յեղած վտարումների, կուսակցութեան անդամների դեմ ռեպրեսիաներ գործադրելու միջոցով աչֆի ընկնել յեվ առաջ քաշվել, աշխատում են իրենց ապահովագրել զգաստութեան պակասութեան հնարավոր մեղադրանքներից, գործադրելով հախուռն ռեպրեսիաներ կուսակցութեան անդամների դեմ:

Այդպիսի կարիերիստ-կոմունիստը կարծում է, թե քանի վոր կուսակցութեան անդամի դեմ հայտարարութիւն է տրված, թեկուզ և սխալ կամ նույնիսկ պրոպեկանդ, նա, կուսակցութեան այդ անդամը, վտանգավոր է կազմակերպութեան համար և նրանից պետք է շուտով ազատվել՝ իրեն, վորպես զգաստ մարդու, ապահովագրելու համար: Դրա համար նա ավելորդ է համարում որչեկտի վորեն քննարկել կոմունիստին ներկայացված մեղադրանքները և վաղորոք կանխորոշում է, վոր անհրաժեշտ է նրան վտարել կուսակցութիւնից:

Այդպիսի կարիերիստ-կոմունիստը, ցանկանալով քծնութեան միջոցով բարձրանալ, առանց աշխատելու խու-

ճապ ե տարածում ժողովրդի թշնամիների մասին և կուս-
ժողովներում թեթևամտությամբ աղաղակում ե կուսակ-
ցության անդամներին կուսակցությունից փորկե ձևական
հիման վրա կամ առանց փորկե հիմքի փտաբերու մասին:
Իսկ կուսակցական կազմակերպությունները հաճախ հե-
տեվում են այդպիսի աղմկարար-կարյերիստներին:

Այդպիսի կարյերիստ-կոմունիստն անտարբեր ե վերա-
բերվում դեպի կուսակցության անդամների բախտը և
պատրաստ ե՝ նախապես գիտենալով, փոր սխալ ե, կուսակ-
ցությունից փտաբերու տամայակներով կոմունիստներին,
փորպեսզի ինքն զգաստ յերեվա: Նա պատրաստ ե սակավ
կարեվոր զանցառությունների համար կուսակցության
անդամներին փտաբել կուսակցությունից այն հաշվով,
փորպեսզի իրեն «ծառայություններ» վերադրի թշնամի-
ներին մերկացնելու գործում, իսկ յեթե վերադաս կուսակ-
ցական որգանները վերականգնում են կուսակցությունից
սխալ փտարվածներին, նա ամենևին չի շփոթվում, ընդու-
նում ե այն մարդու դիրքը, փորը գոհ ե նրանով, թե ինքը
համենայն դեպս գերապահովադրվեց «զգաստության»
նկատմամբ:

Կուսակցական կազմակերպությունները և նրանց ղե-
կավարները, փոխանակ այդպիսի «կոմունիստներին» պատ-
ռելու կեղծ զգաստության դիմակը և նրանց ջրի յերես
հանելու, հաճախ իրենք են կուսակցության շարքերի մաք-
րության համար զգաստ մարտնչողների լուսապսակ ստեղ-
ծում նրանց համար:

Փամանակն ե մերկացնելու այդպիսի, թող թույլ տրվի
ասել, կոմունիստներին յեվ խառանել նրանց փորպես
կարյերիստների, փորոնք աշխատում են ծնունդով բարձ-
րանալ կուսակցությունից կասարվող վստույմների միջո-
ցով, աշխատում են կուսակցության անդամների դեմ
բեպրեսիաներ գործադրելու միջոցով գերապահովագրել
իրենց:

Այնուհետև հայտնի յեն փոչ սակավ փաստեր, յերբ
ժողովրդի դիմակավորված թշնամիները, յերկերասանի
փաստարարները պրովոկացիոն նպատակներով կազմակեր-

պում են կուսակցության անդամների դեմ զրպարտիչ
հայտարարություններ տալը և «զգաստությունը ծախալե-
լու» պատրվակի տակ աշխատում են Համկ(բ)Կ շարքերից
փտաբել ազնիվ և նվիրված կոմունիստներին, դրանով իսկ
իրենցից հեռացնելով հարվածը և իրենց պահելով կուսակ-
ցության շարքերում:

Համկ(բ)Կ Ռոստովի մարզկոմի կուսակցական ղեկա-
վար որգանների բաժնի նախկին վարիչ՝ ժողովրդի մեր-
կացված թշնամի Շացկին և նրա արբանյակները, ողտվե-
լով Համկ(բ)Կ Ռոստովի մարզկոմի ղեկավարների քաղա-
քական կարճատեսությունից, կուսակցությունից փտարում
եյին ողնիվ կոմունիստներին, նախապես իմանալով՝ սխալ
տույժերի եյին յենթարկում աշխատողներին, ամեն կերպ
չարացնում եյին կոմունիստներին, միաժամանակ անելով
այն ամենն, ինչ-վոր հնարավոր ե, փորպեսզի կուսակցու-
թյան մեջ պահեն իրենց հակահեղափոխական կադրերը:

Նույն Ռոստովում Համկ(բ)Կ Ռոստովի մարզկոմի
դպրոցական բաժնի՝ նախկին վարիչ, ժողովրդի թշնամի
Շեստովան հակահեղափոխական կազմակերպության առա-
ջադրությամբ Ռոստովի մանկավարժական ինստիտուտի
կուսկազմակերպության մեջ անցկացրեց մոտ 30 ազնիվ
կոմունիստների փտարումը կուսակցությունից:

Ուկրաինայի Կ(բ)Կ Կիյեվի մարզկոմի նախկին քար-
տուղար, ժողովրդի թշնամի Կուզրյավցեր կուսակցական
ժողովներում շարունակ դիմում եր յելույթ ունեցող կո-
մունիստներին պրովոկացիոն հարցով. «Իսկ դուք գոնե
փորկե մեկի մասին հայտարարություն գրե՞լ եք»: Այդ
պրովոկացիայի հետևանքով Կիյեվում տրվեցին քաղաքա-
կանապես վարկաբեկիչ հայտարարություններ քաղաքային
կուսկազմակերպության անդամների գրեթե կեսի վերա-
բերյալ, ընդվորում հայտարարությունների մեծ մասը
դուրս յեկավ պարզապես սխալ ու նույնիսկ պրովոկա-
ցիոն:

Համկ(բ)Կ Ստալինգրադ քաղաքի Բադիկադյան ույ-
կոմի այժմ մերկացված թշնամական ղեկավարությունը
պրովոկացիոն կերպով կուսակցությունից փտաբեց և հա-

Ղողացրեց ձերբակալել տալ «Բառիկաղներ» գործարանի խոշորագույն ցեխերից մեկի պես 1917 թվից կուսակցության անդամ, նախկին կարմիր պարտիզան Մոխնատկինին «հակախորհրդային խուսակցություններին» համար ինչպես ստուգումից պարզվեց, այդ «հակախորհրդային խուսակցությունները» կայանում եյին նրանում, վոր ընկ. Մոխնատկինն ընկերների հետ զրուցելիս դժգոհություն եր հայտնել, թե գլուղխորհուրդն անհոգի վերաբերմունք ե ցույց տալիս սպիտակների դեմ մարտում ընկած, քաղաքացիական պատերազմի տարիներում պարտիզանական ջոկատի մի հրամանատարի յերեխաների նկատմամբ, իսկ այդ ջոկատում Մոխնատկինը յեղել ե հրամանատարի ոգնական: Ընկեր Մոխնատկինը կուսակցության անդամ իրավունքներում վերականգնվել ե միայն Համկ(բ)կ Կենտկոմի Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի միջամտությունից հետո:

Կուսակցական ապարատը սողոսկած կուսակցության թշնամիներին պրովոկացիոն աշխատանքի այդպիսի փաստեր տեղի յեն ունեցել նաև Վորոնսեի, Կրասնոդարի, Չելյաբինսկի և այլ կուսակցական կազմակերպություններում:

Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր մեր շատ կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավարները մինչև այժմ չեն կարողացել տեսնել և մերկացնել վարպետեն դիմակավորված թեմատուն, վորն աշխատում ե զգաստության վերաբերյալ նիշերով դիմակավորել իր թեմատությունն ու պահպանվել կուսակցության շարքերում—այս սեկ,—յեվ յերկրորդ՝ ձգտում ե ռեպրեսիաների միջոցներ գործադրելու նախապահով ջլատել մեր բոլեվիսկյան կադրերը, անվստահություն յեվ ավելորդ կասկածոսություն սերմանել մեր շարքերում:

Այդպիսի դիմակավորված թշնամին՝ ամենակատաղի դավաճանը, սովորաբար բոլորից ավելի բարձր ե գոռում զգաստության մասին, շտապում ե վորքան կարելի յե շատ «մերկացնել» և այդ բոլորն անում ե մի նպատակով՝ թաղցնել կուսակցության առաջ կատարած իր սեփական

հանցագործությունները և կուսակցական կազմակերպության ուշադրությունը հեռացնել ժողովրդի իսկական թշնամիներին մերկացնելուց:

Այդպիսի դիմակավորված թշնամին՝ զազրելի յերկերեսանին, ամեն կերպ ձգտում ե կուսակազմակերպություններում ստեղծել ավելորդ կասկածանքի պայմաններ, վորով վորեւ մեկի կողմից զրպարտված կոմունիստի պաշտպանության համար հանդես յեկող՝ կուսակցության յուրաքանչյուր անդամին անհապաղ մեղադրում են զգաստության բացակայության և ժողովրդի թշնամիներին հետ կապ ունենալու մեջ:

Այն դեպքերում, յերբ կուսակազմակերպությունն սկսում ե ստուգել կոմունիստի մասին տրված հայտարարությունը, այդպիսի դիմակավորված թշնամին՝ պտոր պրովոկատորն՝ ամեն կերպ պրովոկացիոն զրություն ե ստեղծում այդ ստուգման համար, կոմունիստի շուրջը քաղաքական անվստահության մթնոլորտ ե սերմանում և հենց զրանով, փոխանակ որչեկտիվորեն քննելու գործը, նոր հայտարարությունների հեղեղ ե կազմակերպում նրա դեմ:

Կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավարները, փոխանակ հայտնաբերելու և մերկացնելու այդպիսի դիմակավորված թշնամու պրովոկացիոն աշխատանքը, հաճախ ընկնում են նրա ձեռքը, նրա համար պայմաններ են ստեղծում անպատիժ կերպով զրպարտելու ազնիվ կոմունիստներին և իրենք ել բռնում են կուսակցությունից մասնական, անհիմն վտարումներ կատարելու, տույժեր նշանակելու ուղին և այլն: Ավելին,—նույնիսկ կուսակցական ապարատը սողոսկած և ազնիվ կոմունիստներին զրպարտող թշնամիներին մերկացնելուց հետո ել հաճախ մեր կուսակցական ղեկավարները միջոցներ ձեռք չեն առնում՝ կոմունիստներին կուսակցությունից սխալ կերպով վտարելու նկատմամբ կուսակցական կազմակերպություններում յեղած ֆրաստարարության հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու համար:

Ժամանակն ե, վոր բոլոր կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավարները մերկացնեն և մինչև

վերջ վոչնչացնեն դիմակավորված քեցամուն, վորը սո-
ղոսկել է մեր շարքերը և աշխատում է զգաստության վե-
րաբերյալ կեղծ ճիշերով թագցնել իր թշնամությունը և
իրեն պահել կուսակցության մեջ, վորպեսզի ախտեղ շա-
րունակի իր նողկալի, դավաճանական աշխատանքը:

Ինչո՞վ բացատրել, վոր մեր կուսակցական կազմակեր-
պությունները մինչև այժմ չեն մերկացրել և չեն խառա-
նել վոչ միայն կարյերիստ-կոմունիստներին, վորոնք աշ-
խատում են աչքի ընկնել և առաջ քաշվել կուսակցություն-
ից վտարումների հաշվին, այլև կուսակցության ներսում
գտնվող դիմակավորված թշնամիներին, վորոնք աշխատում
են զգաստության վերաբերյալ աղաղակներով թագցնել
իրենց թշնամությունը և մնալ կուսակցության մեջ, աշ-
խատում են ռեպրեսիաների միջոցների կիրառելու ճա-
նապարհով ջարդոտել մեր բոլշևիկյան կազմերը և ավելորդ
կասկածոտություն սերմանել մեր շարքերում:

Այդ բացատրվում է հանցավոր-թեթեւամիտ վերաբե-
րումներով ռեպի կուսակցության անդամների բախսը:

Բոլորին հայտնի չէ, վոր մեր շատ կուսակցական դե-
կավարները հանդիսացան քաղաքականորեն-կարճատես
գործամուկներ, ժողովրդի թշնամիներին և կարյերիստներին
թույլ տվին շուրջանցել իրենց և թեթեւամտորեն յերկրոր-
դական աշխատողների հայեցողությանը թողին կուսակ-
ցության անդամների բախտին վերաբերող հարցերի լու-
ծումը, հանցագործ կերպով մի կողմ քաշվելով այդ գործի
դեկավարությունից:

Մարգկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցու-
թյունների Կենտկոմներն ու նրանց ղեկավարները վոչ
միայն չեն ուղղում կուսակցությունից կոմունիստներին
վտարելու գործում յեղած հակակուսակցական, բոլշևիզմին
խորթ պրակտիկան, այլև հաճախ իրենք իրենց սխալ ղեկա-
վարությամբ առաջացնում են ձեական և անհոգի-բյուրոկ-
րատական վերաբերմունք դեպի կուսակցության անդամ-
ները և դրանով իսկ ստեղծում են բարենպաստ պայման՝
կարյերիստ-կոմունիստների և կուսակցության դիմակա-
վորված թշնամիների համար:

Չի յեղել վոչ մի դեպք, վոր մարգկոմները, յերկրկոմ-
ները, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմները,
վերահասու լինելով գործին, դատապարտեն դեպի կուսակ-
ցության անդամները հախուռն, ընդհանուր մոտեցում ունե-
նալու պրակտիկան, պատասխանատվության յենթարկեն
սեղական կուսակցական կազմակերպություններին՝ կոմու-
նիստներին անհիմն և սխալ կերպով կուսակցությունից
վտարելու համար:

Կուսակցական կազմակերպությունների ղեկավար-
ները պարզամտորեն գտնում են, վոր սխալ վտարվածների
նկատմամբ յեղած սխալանքների ուղղումը կարող է գցել
կուսակցության հեղինակությունը և վնասել ժողովրդի
թշնամիների մերկացման գործին, առանց հասկանալու, վոր
կուսակցությունից սխալ վտարելու յուրաքանչյուր դեպք
ձեռնտու չէ կուսակցության թշնամիներին:

Մարգային ու յերկրային շատ կազմակերպություննե-
րում առանց վորեւ ընթացք ստանալու ընկած են մեծ
քանակությամբ չքնարկված բողոքներ: Ռոստովի մար-
զում չի քննարկված ավելի քան 2.500 բողոք, Կրասնո-
դարի յերկրամասում—2.000, Սմոլենսկի մարզում—2.300,
Վորոնեժի մարզում—1.200, Սարատովի մարզում—500 և
այլն:

Մարգկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակ-
ցությունների Կենտկոմները, հրաժարվելով վտարվածների
բողոքները քննարկելուց, հակառակ կուսակցության կա-
նոնադրության, այդ հարցի վերաբերյալ Համ Կ(բ)Կ ույ-
կոմների և քաղկոմների վորոշումները գարձել են անվրձ-
ուարեկ և վերջնական վորոշումներ:

Այդ բոլորը նշանակում է, վոր մարգկոմները, յերկր-
կոմները, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմները,
ըստ ելույթյան մի կողմ են քաշվել ամենակարևոր և սուր
հարցում՝ կուսակցության անդամների բախտի հարցում՝
սեղական կուսակցական կազմակերպությունների գոր-
ծունեյությունը ղեկավարելուց, այդ հարցի լուծումը
մատնելով ինքնահոսի, իսկ հաճախ նաև կամայականու-
թյան:

Մարդկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցու-
թյունների Կենտկոմներն իրենք են խրախուսում կուսակ-
ցությունից մասսայական, անհիմն վտարումների պրակ-
տիկան նրանով, վոր անպատիժ են թողնում կուսակցա-
կան այն ղեկավարներին, վորոնք կամայականություն են
թույլ տալիս կոմունիստների վերաբերմամբ:

Ժամանակն է վերջ տալու բոլշեիկներին համար խորթ,
ձեական և անհոգի - բյուրոկրատական վերաբերմունքին
դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամները:

Ժամանակն է հասկանալու, վոր՝

«Կուսակցության անդամի համար կուսակցու-
թյունը դարձել է շատ մեծ և լուրջ գործ և կուսակ-
ցության անդամությունը կամ կուսակցությունից
վտարվելը՝ այդ մեծ բեկում է մարդու կյանքում»:
Ժամանակն է հասկանալու, վոր՝

«Կուսակցության շարքային անդամների համար
կուսակցության մեջ գտնվելը, կամ կուսակցություն-
ից վտարվելը, — այդ կյանքի և մահվան հարց է»
(Ստալին):

Ժամանակն է հասկանալու, վոր բոլշեիկյան զգաստու-
թյան եյությունն այն է, վոր պետք է կարողանալ մեր-
կացնել թշնամուն, վորքան ել վերջինս լինի խորամանկ
և ձկուն, ինչպիսի քղամիդ ել հագած լինի նա, և վոչ թե
այն, վոր առանց ընտելության կամ «համենայն դեպս» տաս-
նյակներով և հարյուրներով վտարեն կուսակցությունից
բոլոր նրանց, ովքեր ձեռք են ընկնում:

Ժամանակն է հասկանալու, վոր բոլշեիկյան զգաստու-
թյունը վոչ միայն չի բացառում, այլ ընդհակառակը նա-
խատեսում է առավելագույն զգուշություն և ընկերական
հոգատարություն ցուցաբերելու կարողություն, յերբ
վճռվում են կուսակցությունից վտարելու կամ վտար-
վածներին կուսակցության անդամների իրավունքներում
վերականգնելու հարցերը:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումը կուսակցական բոլոր
կազմակերպություններից և նրանց ղեկավարներից պա-
հանջում է ամեն կերպ բարձրացնել կուսակցական մաս-

սաների բոլշեիկյան զգաստությունը, մերկացնել և մինչև
վերջ արմատախիլ անել կուսակցության բոլոր կամա թե
ակամա թշնամիներին:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումն այդ խնդիրը հաջողու-
թյամբ լուծելու կարևորագույն պայման է համարում
առանց մնացորդի վերացնել դեպի մարդիկ, դեպի կուսակ-
ցության անդամները հախուռն, վոչ անհատական, ընդհա-
նուր մոտեցում ունենալու հակակուսակցական պրակտիկան:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումը ՎՈՐՈՇՈՒՄ Ե.—

1. Պարտավորեցնել մարդկոմներին, յերկրկոմներին,
ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներին և բոլոր
կուսակցական կազմակերպություններին՝ վճռականապես
վերջ տալ կուսակցությունից մասսայական, հախուռն
վտարումներին և իրականում սահմանել անհատական, դի-
ֆերենցիալ մոտեցում՝ կուսակցությունից վտարելու կամ
վտարվածներին կուսակցության անդամների իրավունք-
ներում վերականգնելու հարցերը վճռելիս:

2. Պարտավորեցնել մարդկոմներին, յերկրկոմներին, ազ-
գային կոմկուսակցությունների Կենտկոմներին՝ կուսակ-
ցական պոստերից հանել և կուսակցական պատասխանա-
տվության յենթարկել կուսակցական այն ղեկավարներին,
վորոնք չեն կատարում Համկ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվ-
ները, Համկ(բ)Կ անդամներին և թեկնածուներին կուսակ-
ցությունից վտարում են առանց բոլոր նյութերը մանրա-
կրկիտ կերպով ստուգելու և կուսակցության անդամների
վերաբերմամբ կամայականություն են թույլ տալիս:

3. Առաջարկել մարդկոմներին, յերկրկոմներին, ազգա-
յին կոմկուսակցությունների Կենտկոմներին և Համկ(բ)Կ
Կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձ-
նաժողովի կուսկոլեգիաներին՝ յերբեք ամսվա ընթացքում
ավարտել կուսակցությունից բոլոր վտարվածների բողոք-
ների քննարկումը:

4. Պարտավորեցնել բոլոր կուսակցական կոմիտեներին՝
կուսակցությունից կոմունիստներին վտարելու իրենց վո-
րոշումներում պարզ ու ճշգրիտ թվել այն պատճառաբա-
նությունները, վորոնք վտարելու հիմք են ծառայել, վոր-

պեսզի վերադաս կուսակցական որգանները հնարավորութիւն ունենան ստուգելու այդ վորոշումները ճշտութիւնը, իսկ ռայկոմի, քաղկոմի, մարզկոմի կամ ազգային կոմկուսակցութեան կենտկոմի յուրաքանչյուր այդպիսի վորոշում անպայման հրապարակել մամուլում:

5. Սահմանել, վոր կուսակցական որգանները, տեղական կուսկազմակերպութիւնների կողմից սխալ վտարվածներին վերականգնելով կուսակցութեան անդամների իրավունքներում, պարտավոր են իրենց վորոշումներում ճշտութեամբ մատնանշել, թե ՀամԿ(բ)Վ վոր ռայկոմը, քաղկոմը պետք է կուսակցական փաստաթղթեր տա կուսակցութեան մեջ վերականգնվածին:

6. Պարտավորեցնել կուսակցութեան ռայկոմներին, քաղկոմներին անհապաղ տալ կուսակցութեան մեջ վերականգնվածներին կուսակցական փաստաթղթերը, նրանց մասնակից դարձնել կուսակցական աշխատանքին և բացատրել նախնական կուսկազմակերպութիւնների բոլոր անդամներին, վոր նրանք պատասխանատու յեն ՀամԿ(բ)Վ շարքերում վերականգնվածների բոլշևիկյան դատարարականութեան համար:

7. Պարտավորեցնել կուսակցական կազմակերպութիւններին՝ կուսակցական պատասխանատվութեան յենթարկել այն անձանց, վորոնք մեղավոր են կուսակցութեան անդամներին զրպարտելու մեջ, լիովին ռեաբիլիտացիա անել կուսակցութեան այդ անդամներին և մամուլում հրապարտել իրենց վորոշումներն այն դեպքերում, յերբ մամուլում նախապես զետեղվել եյին կուսակցութեան անդամին վարկաբեկող նյութեր:

8. Արգելել կուսկազմակերպութիւններին կոմունիստի հաշվառման քարտում մտցնել կուսակցութիւնից նրա հեռացվելու փաստը, մինչև բողոքների քննարկելը և վտարման մասին վերջնական վճիռ կայացնելը:

9. Արգելել այն սխալ, ֆասսակար պրակտիկան, յերբ ՀամԿ(բ)Վ-ից վտարվածներին անհապաղ հանում են նրանց վարած պաշտոնից:

Սահմանել, վոր այն բոլոր դեպքերում, յերբ ՀամԿ(բ)Վ-ից վտարելու կապակցութեամբ անհրաժեշտ է լինում աշխատողին ազատել իր վարած պաշտոնից, այդ ազատումը կարող է կատարվել միայն նրան ուրիշ աշխատանք տրամադրելուց հետո:

10. Պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային կոմկուսակցութիւնների կենտկոմներին՝ վոչ ուշ, քան մինչև 1938 թվի փետրվարի 15-ը համապատասխան խորհրդային ու տնտեսական որգանների միջոցով ապահովել ՀամԿ(բ)Վ-ից վտարվածների աշխատանքի մտնելը և առաջիկայում թույլ չտալ այնպիսի դրութիւն, վոր ՀամԿ(բ)Վ-ից վտարվածներն աշխատանքից զրկված մնան:



02
Ответ. по выпуску *Потилян Б.*

Техред. *Жданович Л. М.*

Корректор *Кеворкьян М.*

Издание № 11/37. Сдано в набор 23 февраля 1938 г., подписано в печать
10 марта 1938 г. Формат 44х62/8. Объем 1¹/₄ п. л. Тираж 4.000

Уполобллит № И-752. Типография Обл. армянского издательства
„Большевик“ (Ростов-Дон, Ворошиловский пр. 27). Заказ № 429

ՀՀ Ազգային գրադարան



NL0179719

ԳԻՆԵ 25 ԿՈՊ.
Цена 25 коп.

2240

**ОБ ОШИБКАХ ПАРТОРГАНИЗАЦИЙ
ПРИ ИСКЛЮЧЕНИИ КОММУНИСТОВ
ИЗ ПАРТИИ,
О ФОРМАЛЬНО-БЮРОКРАТИЧЕСКОМ
ОТНОШЕНИИ К АПЕЛЛЯЦИЯМ
ИСКЛЮЧЕННЫХ ИЗ ВКП(б)
И О МЕРАХ ПО УСТРАНЕНИЮ ЭТИХ
НЕДОСТАТКОВ**
ПОСТАНОВЛЕНИЕ ПЛЕНУМА ЦК ВКП(б)
(На армянском языке)

**РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК“**

Ростов-Д., Ворошиловский пр., 27